ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կադրերի և ԱՀՏԱ բաժնի պատմությունը

Բազմիցս բացված, վերաբացված, վերանվանված ու վերափոխված ուսումնական հաստատությունը 1990 թ. վերանվանվել է ԽՍՀՄ ՆԳՆ իրավաբանական բարձրագույն հեռակա դպրոցի երևանյան ֆակուլտետ՝ շարունակելով ՆԳ համակարգը համալրել բարձր որակավորում ստացած կադրերով: 1991 թվականին՝ անկախության հռչակումից հետո, Հայաստանում ՆԳՆ կադրերի պատրաստումն իրականացրել է երկու կրթական հաստատություն՝ միլիցիայի բարձրագույն դպրոցը (հետագայում վերանվանված ՆԳՆ բարձրագույն դպրոց) և ՆԳՆ ուսումնական կենտրոնը: ՀՀ կառավարության 2000թ. օգոստոսի 16-ի թիվ 485-Ն որոշմամբ Հանրապետության ներքին գործերի նախարարության բարձրագույն դպրոցը վերանվանվել է **Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ակադեմիա**, իսկ 2003թ., երբ ՀՀ ներքին գործերի նախարարությունը վերակազմավորվել է ՀՀ ոստիկանության, ՆԳՆ ակադեմիան և ՆԳՆ ուսումնական կենտրոնը վերանվանվել են համապատասխանաբար ՀՀ ոստիկանության ակադեմիա և ՀՀ ոստիկանության ուսումնական կենտրոն, որոնք հետագայում վերակազմավորվել են և դարձել ՀՀ ոստիկանության կրթահամալիր, որի կազմում են 3 ուսումնական հաստատություններ ակադեմիա, քոլեջ և ուսումնական կենտրոն:

Վերը նշված ուսումնական հաստատության ենթակա ստորաբաժանումներից՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքների բաժինը մշտապես գործել է որպես կառուցվածքային ստորաբաժանում, որտեղ նախապատրաստվել է մշտական և փոփոխական անձնակազմի վերաբերյալ հրամանների նախագծեր /նշանակման, ազատման, խրախուսման, կարգապահական տույժի/, ոստիկանությունում ծառայության անցնելու, ոստիկանությունում ծառայության երկարամյա կենսաթոշակի անցնելու համապատասխան նյութեր, առաջքաշման միջնորդություններ: Միաժամանակ իրականացվել է կադրային աշխատանքների համար անբաժան մաս կազմող անձնակազմի հետ տարվող աշխատանքներ, որոնք մշտապես իրենց դրական ազդեցությունն են ունեցել ծառայողական խնդիրները լուծելիս, օրինականության և ծառայողական կարգապահության ամրապնդման, անձնակազմի շրջանում բարոյահոգեբանական վիճակի բարելավման վրա: Տարբեր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողների հետ տարվել են աշխատանքների տարբերակված

մոտեցում, որոնց արդյունքում առկա է դարձել դրական տեղաշարժեր հատկապես ծառայողական գործունեության առանձնահատկություններից բխող բարձր բարոյականությամբ օժտված անձի անհատական հատկանիշներում և որակներում: Բաժնի կողմից անձնակազմի հետ տարվող աշխատանքներն իրականացվում են պետահիրավական մտածելակերպի ձևավորման, մասնագիտական և բարոյական դաստիարակության, իրավական դաստիարակության, հայրենասիրական դաստիարակության ուղղություններով:

ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 9-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության ոստիկանության ակադեմիա» պետական հիմնարկը վերակազմակերպելու և «Հայաստանի Հանրապետության ոստիկանության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 1791-Ն որոշումը:

2006թ-ից մինչև 2018թ-ը ՀՀ ոստիկանության պետի հրամաններով ՀՀ ոստիկանության կրթահամալիրում 3 անգամ գործող կազմհաստիքային ցուցակով կրճատվել են բոլոր հաստիքներ և սահմանվել են նոր հաստիքներ և 14 անգամ կազմհաստիքային ցանկում կատարվել են մասնակի փոփոխություններ: Նշված կազմհաստիքային մասնակի փոփոխություններից ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կադրերի և ԱՀՏԱ բաժնի կազմհաստիքային ցանկում մասնակի փոփոխություններ են կատարվել 4 անգամ:

ՀՀ ոստիկանության պետի 24.11.2009թ թիվ 3003-Ա հրամանի համաձայն հաստատվել է «Հայաստանի Հանրապետության ոստիկանության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության /այսուհետ ՀՀ ոստիկանության ակադեմիա/ կազմհաստիքային ցանկը՝ որտեղ անձնակազմի հետ տարվող աշխատանքների բաժնում / ԱՀՏԱ բաժին/ սահմանվել է թվով 4 հաստիք /1 պետի տեղակալ, 2 ավագ տեսուչ, 1 տեսուչ, 1 կրտսեր տեսուչ/ և կադրերի խումբը 4 հաստիքով /2 ավագ տեսուչ, 1 տեսուչ, 1 կրտսեր տեսուչ/:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրը վերակազմավորվել է ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի թիվ 615-Ն որոշմամբ, որով Հայաստանի Հանրապետության ոստիկանության ակադեմիա պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպվեց Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիր պետական ոչ առևտրային կազմակերպության:

ՀՀ ոստիկանության պետի 22.07.2011թ. թիվ 1871–Ա հրամանով հաստատվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կազմհաստիքային ցանկը, որտեղ կադրերի և

անձնակազմի հետ տարվող աշխատանքների բաժնում /կադրերի և ԱՀՏԱ բաժին/ սահմանվել է ընդհանուր թվով 10 հաստիք՝ 6 հաստիք /1 պետի տեղակալ, 2 ավագ տեսուչ, 2 տեսուչ, 1 կրտսեր տեսուչ/ և ակումբի 4 հաստիք /1 տեսուչ, 3 տեխնիկական սպասարկող /1 տեխնիկ, 1 նկարիչ-ձևավորող, 1 ռեժիսոր/:

ՀՀ ոստիկանության պետի 27.06.2013թ թիվ 2123-Ա հրամանով կատարել փոփոխություններ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի և ենթակա ստորաբաժանումների կառուցվածքներում և հաստիքացանկերում և ուժը կորցրած ճանաչել ՀՀ ոստիկանության պետի 26.05.2011թ թիվ 1238-Ա և 22.07.2011թ. թիվ 1871-Ա հրամանները: Կատարված կազմհաստիքային փոփոխություններից հետո կադրերի և ԱՀՏԱ բաժնում սահմանվել է ընդհանուր թվով 6 հաստիք /1 պետի տեղակալ, 1 հատկապես կարևոր հանձնարարություններով ավագ տեսուչ, 1 ավագ տեսուչ, 1 տեսուչ, 1 կրտսեր տեսուչ, 1 տեսուչ (տեխնիկական սպասարկող)/:

ՀՀ ոստիկանության պետի 08.09.2014թ. թիվ 126-ԱԳ հրամանի համաձայն ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կադրերի և ԱՀՏԱ բաժնի հաստիքները 1-ով ավելացել է և դարձել է ընդհանուր թվով 7 հաստիք, կազմհաստիքային փոփոխությունների արդյունքում լրացուցիչ սահմանվել է 1 կրտսեր տեսուչ:

ՀՀ ոստիկանության պետի 22.10.2014թ. թիվ 159-ԱԳ հրամանի համաձայն ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կադրերի և ԱՀՏԱ բաժնի հաստիքները 1-ով ավելացել է և դարձել է ընդհանուր թվով 8 հաստիք, կազմհաստիքային փոփոխությունների արդյունքում լրացուցիչ սահմանվել է 1 ավագ տեսուչ-հոգեբան:

ՀՀ ոստիկանության պետի 17.12.2014թ. թիվ 203-ԱԳ հրամանի համաձայն ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կադրերի և ԱՀՏԱ բաժնի հաստիքները 1-ով կրճատվել է և դարձել է ընդհանուր թվով 7 հաստիք, կազմհաստիքային փոփոխությունների արդյունքում կրճատվել է 1 ավագ տեսուչ-հոգեբան:

ՀՀ ոստիկանության պետի 24.08.2017թ. թիվ 162-ԱԳ հրամանի համաձայն ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կադրերի և ԱՀՏԱ բաժնի ընդհանուր թվով 7 հաստիքները մնացել են անփոփոխ՝ 1 տեխնիկական սպասարկող տեսուչը կրճատվել է և սահմանվել է 1 քաղաքացիական աշխատանք կատարող: